ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

UK Government

ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 1325 ԲԱՆԱՁԵՎԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԴՐՈՒՄ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՋԱՆՔԵՐԻՆ

INSTITUTE FOR
WAR & PEACE REPORTING
IWPR

DEMOCRACY TODAY

oxYGen

ԱՐՄԱՎԻՐԻ
ՁԱՐԳԱՑՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

I. Համընդհանուր նպատակներ և արժեքներ

1. Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» (այսուհետ՝ ԿԽԱ) 1325 բանաձևի դրույթների իրականացման Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գործողությունների երրորդ ազգային ծրագիրը (այսուհետ՝ ԳԱԾ), որը կրում է «Ներդրում խաղաղություն ապահովելու համաշխարհային ջանքերին» խորագիրը, վերահաստատում է ՀՀ կառավարության քաղաքական հանձնառությունը և ռազմավարական տեսլականը առաջ մղել խաղաղության օրակարգը, այդ թվում՝ ԿԽԱ հանձնառությունների իրականացման ուղղությամբ:

2. Գործողությունների ազգային երրորդ ծրագիրը, հիմնվելով նախորդ երկու ԳԱԾ-ի արձանագրած ձեռքբերումների և դրանք իրագործելու ընթացքում արված հետևությունների վրա, ապահովում է իրականացված քայլերի շարունակականությունը՝ միաժամանակ արձագանքելով ՀՀ ներկայիս մարտահրավերներին ու զարգացման տեսլականին:

3. ՀՀ 2025-2027 թթ. գործողությունների երրորդ ազգային ծրագիրը կազմվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության (այսուհետ՝ ԱԳՆ) համակարգմամբ՝ հաշվի առնելով ՀՀ ճյուղային բոլոր գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիական հասարակության կողմից տրամադրված տեղեկատվությունն ու առաջարկները: Ծրագրում հաշվի են առնվել նախորդ երկու ԳԱԾ-ի մշտադիտարկման ու գնահատման արդյունքները:

4. ԳԱԾ-ի երրորդ ազգային ծրագրի որակական ու քանակական արդյունքային ցուցանիշները բարելավելու նպատակով այն հարմարեցվել է ՀՀ կառավարության կողմից ընդունված ռազմավարություններին, ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերին:

5. ԳԱԾ-ի նպատակն է հասցեագրել առկա մարտահրավերներն ու զարգացման հնարավորությունները՝ ապահովելով, որ ՀՀ-ում ԿԽԱ օրակարգը շարունակի լինել արդիական, հեռանկարային և իրագործելի:

6. ԳԱԾ-ում հաշվի է առնվել 2023 թվականին Ղարաբաղից շուրջ 115.000 տեղահանված հայերի կարիքների արագ արձագանքման ու աջակցության ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը: Առաջնային են հատկապես խոցելի խմբերի՝ երեխաների, տարեցների, կանանց և աղջիկների խնդիրների հասցեագրումը, ովքեր տեղահանումից հետո հայտնվել էին ծայրահեղ խոցելի վիճակում: ԳԱԾ-ը կարևորում է սահմանամերձ շրջաններում բնակվող կանանց խնդիրների հասցեագրումը:

7. ԿԽԱ երրորդ ազգային ծրագիրն ընդգծում է Ղարաբաղից տեղահանված կանանց և աղջիկների խնդիրների հասցեագրման կարևորությունն ու վերահաստատում է ՀՀ հանձնառությունը նրանց իրավունքների ապահովման և կայուն կենսապայմանների ստեղծման հարցում:

8. Երրորդ ԳԱԾ-ում առաջնահերթություն են նաև ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորածների հարազատների, որդեկորույս մայրերի, պատերազմի հետևանքով ամուսին կորցրած կանանց, առանց հոր մնացած երեխաների կարիքները:

9. ԳԱԾ-ն առաջարկում է համապարփակ, գենդերազգայուն ծրագրեր, որոնք անդրադառնում են ընտանիքներում կանանց հատուկ կարիքներին և դերին, նախատեսում է հոգեբանական, մասնագիտական կարողությունների զարգացման ու այլ բնույթի աջակցություն:

10. ԳԱԾ-ն անդրադառնում է ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող և մյուս բոլոր խմբերի կանանց կարիքներին՝ որպես ներառականությունն ապահովելու, խաղաղության կառուցմանը հավասար մասնակցությունը խթանելու, հակամարտության ընթացքում և հետհակամարտային շրջանում այս կանանց առջև ծառացած խոցելիությունները հաղթահարելու կարևորագույն գործոններից մեկը, որը հարթում է ճանապարհը դեպի ավելի համախմբված և արդար հասարակություն:

11. 2018 թվականից ի վեր Հայաստանն ակտիվացրել է իր ուշադրությունը ժողովրդավարական բարեփոխումների վրա՝ ստեղծելով նոր հնարավորություններ կանանց իրավունքների առաջխաղացման համար: Կառավարությունը զգալի քայլեր է ձեռնարկել գենդերային հավասարության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակն ամրապնդելու համար, ներառյալ՝ Կանանց, խաղաղության և անվտանգության գործողությունների ազգային ծրագրի իրականացումը:

12. Այսպիսով, ծրագիրը ձգտում է մեծացնել կանանց մասնակցությունը խաղաղության կառուցման և որոշումների կայացման գործընթացներում՝ ճանաչելով նրանց կենսական դերը կայուն խաղաղության և ժողովրդավարության խթանման գործում:

13. Ծրագիրն առաջարկում է կանանց մասնակցության խթանման ապահովման անհրաժեշտությունը նաև գնումների գործընթացում, որի շրջանակներում նախատեսվում է քննարկման առարկա դարձնել կառուցակարգերի և կարգավորումների սահմանման հարցը, ինչը կնպաստի գնումների գործընթացում:

Հայաստանի մոտեցումը երրորդ ԳԱԾ-ը մշակելիս

Ներառականություն

Երրորդ ԳԱԾ-ի մշակման աշխատանքներին նախորդել են տեղեկատվության ընդհանրական հավաքագրումը, պետական գերատեսչությունների ու քաղաքացիական հասարակության փոխգործակցությունը: Մասնավորապես, այն ներառել է լայնածավալ խորհրդակցություններ քաղաքացիական հասարակության դերակատարների, համայնքների առաջնորդների, ակտիվիստների, տեղահանվածների, հաշմանդամություն ունեցող անձանց և փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ:

ԳԱԾ նախապատրաստական փուլում օգտագործվել է հասարակական կազմակերպությունների կողմից առաջարկված մանրամասն ու փոխկապակցված մեթոդաբանություն՝ ներառյալ կրթական ծրագրերը, ԿԽԱ ոլորտում նոր միտումների վերաբերյալ վերջին թարմացումները, պետական գործընկերների և համայնքային

առաջնորդների հետ քննարկումները, տվյալների հավաքագրումը և համայնքային գնահատումները:

Քաղաքացիական հասարակության հատուկ դերը

ԿԽԱ միջգերատեսչական հանձնաժողովի և քաղաքացիական հասարակության համագործակցությունը զգալիորեն աճել է երկրորդ ԳԱԾ-ի ստեղծումից ի վեր: Քաղաքացիական հասարակությունը ոչ միայն հանդես է եկել որպես հավասար գործընկեր ԳԱԾ մշակման և իրականացման գործում, այլ նաև դարձել է դրա իրականացման մշտադիտարկման համար պատասխանատու հանձնաժողովի մաս:

Այս համագործակցությունը խորացնելու նպատակով ԳԱԾ-ի համար կիրառվել են մի շարք մասնակցային մեթոդաբանություններ՝ քաղաքացիական հասարակության դերակատարները, համայնքային առաջնորդները և հասարակական կազմակերպությունները երկրի տարբեր մասերից հրավիրվել են իրենց ծրագրերը ներկայացնելու, մտահոգությունները կիսելու և համայնքների կարիքները ներկայացնելու համար:

Արդյունավետ երկխոսություն ապահովելու նպատակով կազմակերպվել են հանդիպումներ տարբեր գերատեսչությունների ԿԽԱ հանձնաժողովի անդամների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև, ինչը նպաստել է համագործակցությանն ու ներառականության ապահովմանը:

ԳԱԾ արդյունավետ իրականացումը պահանջում է մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) շրջանակի ինտեգրում, որն առկա է փաստաթղթի եզրափակիչ մասում: Նման շրջանակն ապահովում է համակարգված հաշվետվողականություն, հեշտացնում է սահմանված նպատակների համեմատ առաջընթացի գնահատումն ու հնարավորություն է տալիս ճշգրտումներ իրականացնել քաղաքականության մեջ՝ հիմնվելով տվյալների վրա:

Մշտադիտարկման և գնահատման արդյունավետ մեխանիզմներ ներդնելով՝ ԳԱԾ-ը ոչ միայն ուժեղացնում է նշված արդյունքներին հասնելու իր կարողությունները, այլ նաև խթանում է նոր մարտահրավերներին արձագանքելու հնարավորությունը՝ դրանով իսկ բարձրացնելով ընդհանուր արդյունավետությունը և երկարաժամկետ կայունությունը:

Ի դեպ՝ համայնքային որոշումների կայացման գործում կանանց մասնակցությունը նախապես մեծացնելն առավել բարենպաստ միջավայր կարող է ստեղծել տեղական համայնքներում ԿԽԱ օրակարգի տեղայնացման ու իրականացման համար:

Այս համատքստից ելնելով 2024 թվականին Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում ստեղծվել է Կանանց <<Ալաշկերտ>> կոմիտե <<Դեմոկրատիան այսօր>> ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Կոմիտեն բաղկացած է 7 կանանցից, ովքեր զբաղվում են համայնքի բնակավայրերում տարբեր ծրագրերի իրականացմամբ: Աշխատանքային խմբում ներգրավված են համայնքի գրեթե բոլոր բնակավայրերի ակտիվ կանայք:

2025 թվականին համայնքում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ Հայաստանի ԳԱԾ-ում կանխարգելման քաղաքականությանն ուղղված, կանանց նկատմամբ բռնությունն կանխելու և խաղաղություն հաստատելու համար: Այս քաղաքականությունը ընդգրկում է լայնածավալ նախաձեռնություններ, այդ թվում՝ վաղ նախազգուշացման համակարգերի մշակում, գենդերային զգայուն միջնորդություն,

գենդերային բռնության դեմ պայքարի ծրագրեր, սոցիալտնտեսական անհավասարությունների հաղթահարում և օրինականության ու իրավական պաշտպանության ամրապնդում:

Համայնքային առաջնորդության վրա հիմնվելով և խաղաղության կառուցման գործընթացներում կանանց ձայնն առաջնահերթ համարելով, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցությունն ընդլայնելով՝ Հայաստանը միտված է շարունակել իր հաստատուն քայլերը ամրապնդելու համար իր դիրքերը որպես ԿԽԱ սկզբունքներին հավատարիմ, առաջադեմ և նորարար մոտեցում ունեցող երկիր՝ ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում:

ԿԽԱ-ի շրջանակը նպատակ ունի մեծացնել կանանց մասնակցությունը անվտանգությանը վերաբերող որոշումների կայացման ու խաղաղությանը միտված բանակցությունների գործընթացներում, ընդլայնել կանանց աշխատանքային ներուժի դրսևորման հարթակները, պաշտպանել նրանց ցանկացած տեսակի բռնություններից, կանխել հակամարտությունները՝ անդրադառնալով գենդերային անհավասարությանը և ապահովել օգնության և վերականգնման արդյունավետ գործընթացներ հետհակամարտային միջավայրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

UK Government

ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 1325 ԲԱՆԱՁԵՎԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԴՐՈՒՄ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՋԱՆՔԵՐԻՆ

INSTITUTE FOR WAR & PEACE REPORTING
IWPR

DEMOCRACY TODAY

oxYGen

ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Վերջնարդյունքային ցուցանիշներ	Ճատորոշված տվյալներ	Ելակետային արժեք (միավոր)	2025 թ. թիրախային արժեք (միավոր)	2026 թ. թիրախային արժեք (միավոր)	2027 թ. թիրախային արժեք (միավոր)	Տվյալների հավաքագրման մեթոդներ, գործիքներ և աղբյուրներ
ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ						
1.1 ՀՀ կողմից միջազգային հարթակներում ցեղասպանության կանխարգելման ոլորտում իրականացվող քայլերի վերաբերյալ իրազեկված կանանց թիվ 1.2 Իրազեկմանն ուղղված միջոցառումների թիվ	1.1 Ըստ տարիքային խմբերի 1.1 Ըստ մարզի Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք 1.2 Ըստ իրազեկմանն ուղղված միջոցառման բնույթի (օրինակ՝ քննարկում, արշավ, սոցիալական գովազդ, պաստառներ, մեդիա միջոցառումներ և այլն)					Միջոցառումների մասնակիցներ գրանցման թերթիկներ
2.1 ԿԽԱ օրակարգի վերաբերյալ իրազեկ, գիտելիք և հմտություններ ստացված կանանց թիվ 2.2 Իրազեկմանը, գիտելիքի փոխանցմանը և հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումների թիվ	2.1 Ըստ տարիքային խմբերի 2.1 Ըստ մարզի Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք 2.2 Ըստ միջոցառման բնույթի (օրինակ՝ սեմինար, դասընթաց, քննարկում, մեդիա արշավ, հանդիպում և այլն)					Միջոցառումների մասնակիցներ գրանցման թերթիկներ

3.1 1325 բանաձևի վերաբերյալ կրթական ծրագրերում տեղեկատվության առկայություն 3.2 1325 բանաձևի վերաբերյալ ուսումնական նյութերի առկայություն	3.1 Տեղեկատվության առկայություն՝ Այո – Ոչ 3.1 Կրթական ծրագրի տեսակը (օրինակ՝ ոչ ֆորմալ և ֆորմալ ձևեր, կրթական մակարդակ) 3.2 Ուսումնական նյութի առկայություն՝ Այո – Ոչ		Այո Այո	Այո Այո		Համապատասխան կրթական ծրագրերի, ուսումնական նյութերի ուսումնասիրություն
4. Թեմատիկ կիբեռանվտանգության, թվային գրագիտության և մեդիագրագիտության վերաբերյալ միջոցառումների թիվ	4. Ըստ իրազեկմանն ուղղված միջոցառման բնույթի՝ դասընթացներ, սեմինարներ					Միջոցառումների մասնակիցներ գրանցման թերթիկներ
5.1 Ճգնաժամային իրավիճակներում առկա արագ արձագանքման մեխանիզմների կիրառման կարողություններ ունեցող կանանց թիվ Միջոցառումների թիվ	5.1 Ըստ տարիքային խմբերի 5.1 Ըստ մարզի և ըստ սահմանամերձ համայնքների Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք 5.2 Ըստ միջոցառման բնույթի (օրինակ՝ սեմինար, դասընթաց, քննարկում, մեդիա միջոցառում, հանդիպում, ստուգիչ վարժանքներ և այլն)					Միջոցառումների մասնակիցներ գրանցման թերթիկներ

6.1 ԿԽԱ և կլիմայի փոխկապակցության վերաբերյալ առկա ռեսուրսների և հնարավորությունների վերաբերյալ իրազեկ կանանց թիվ	6.1 Ըստ կանանց թվի 6.1 Ըստ տարիքային խմբերի					Միջոցառումների մասնակիցներ գրանցման թերթիկներ

	6.1 Ըստ մարզի Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք 6.1) Ըստ խոցելիության Բռնության ենթարկված կանայք, անապահով ընտանիքների կանայք, թրաֆիքինգի երթարկված կանայք 6.1) Ըստ աշխատանքային զբաղվածության Մասնակիցների 50 % աշխատող 6.2) Այո – Ոչ		Այո			

6.2 ԿԽԱ և կլիմայի փոխկապակցության վերլուծության առկայություն՝ Այո – Ոչ						
7.1 ԿԽԱ օրակարգի վերաբերյալ՝ սփյուռքից ներգրավված կանանց թիվ 7.2 ԿԽԱ օրակարգի վերաբերյալ՝ սփյուռքից ներգրավված կազմակերպությունների թիվ	7.1 Ըստ տարիքային խմբերի 7.1 Ըստ երկրների ընդգրկվածության Տեղահանված կանայք 7.2 Ըստ կազմակերպության ձևերի (օրինակ՝ կրթականուսումնական, մշակութային, քաղաքական, համայնքային և այլն)					Միջոցառումների մասնակիցներ գրանցման թերթիկներ